ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2024թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.30 ՇԵՆՔԻ Հ.23 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևանի քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 50-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի 30 շենքի 23 բնակարանը՝ 31,23 քմ մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N08092022-01-0382 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Զինա Մանվելի Մոսյանին և Լուսինե Մանվելի Մոսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.30 ՇԵՆՔԻ Հ.23 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Տիգրան Մեծ պողոտայի հ.30 շենքի 31,23 քմ մակերեսով հ.23 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել Զինա Մանվելի Մոսյանին և Լուսինե Մանվելի Մոսյանին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N08092022-01-0382 վկայական):

Տիգրան Մեծ պողոտայի 30 շենքի 23 բնակարանը՝ 31,23 քմ մակերեսով, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N08092022-01-0382 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Համաձայն Կենտրոն վարչական շրջանի թիվ 9 լիազոր ներկայացուցչի 19.12.2022թ. տեղեկանքի՝ Զինա Մանվելի Մոսյանը 1989 թվականից մինչ այսօր բնակվում է Տիգրան Մեծ պողոտայի 30 շենքի 23 բնակարանում, իսկ աղջիկը Լուսինե Մանվելի Մոսյանը բնակվում են 20.07.2000 թվականից ծնված օրից:

Զինա Մանվելի Մոսյանը, 1988-1992թթ., որպես Ադրբեջանից բռնի տեղահանված անձ 2001 թվականի հունիսի 12-ին հաշվառումից հանվել է՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու կապակցությամբ և բնակվել է Տիգրան Մեծ պողոտայի 30 շենքի 23 բնակարանում:

Փախստականների հարցերով զբաղվող պետական լիազոր մարմնի կողմից ՀՀ պետբյուջեի, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին բնակարան չի ստացել, սակայն տրամադրվել է մեկ սենյականոց թիվ ՄԾԱ20101 բնակարանի գնման վկայագիր, որի միջոցով սահմանված ժամկետում բնակարան ձեռք չի բերվել և վկայագիրը մարվել է (հիմք՝ Միգրացիոն ծառայության 17.11.2022թ. թիվ 01/07.2/4073-22 տեղեկանքը):

Համաձայն Հայաստանի Հանրապետության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունու անձնագրային բաժանմունքի կողմից տրված 07.12.2022թ. թիվ 8/7-5348 գրության՝ Տիգրան Մեծ պողոտայի 30 շենքի 23 բնակարանում 10.02.2016թ. հաշվառվել է Զինա Մանվելի Մոսյանը (ծնված՝ 20.05.1962թ.), իսկ 15.02.2017թ. հաշվառվել է Լուսինե Մանվելի Մոսյանը (ծնված՝ 20.07.2000թ.):

Տիգրան Մեծ պողոտայի 30 շենքի 10 բնակարանը համաձայն Կենտրոն թաղային համայնքի ղեկավարի 21.05.2009թ. 917-Ա որոշման՝ սեփականաշնորհվել է Բորիս Բենիկի Սահակյանի ընտանիքին, որտեղ Զինա Մանվելի Մոսյանը չի մասնակցել սեփականաշնորհմանը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի 26.10.2022թ. թիվ ԱՏ-26102022-99-0176 և 11.07.2022 թվականի թիվ ԱՏ-11072022-99-0300 գրությունների՝ Լուսինե Մանվելի Մոսյանի և Զինա Մանվելի Մոսյանի անուններով որևէ անշարժ գույքի պետական գրանցում չի կատարվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 26.12.2023թ. թիվ 50Ն որոշման հավելվածի (ծրագրի) 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքները՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունել Երևանի ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ